ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
«ՀՀՀՌ-ՄԱԱՊՁԲ-02/19»

ք. Երևան «04» «մարտի» 2019թ.

«Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Շ. Վարդանյանի, ով գործում է Խորհրդի նախագահ Ռ. Ջաղինյանի կողմից 28.12.2018թ. արձակված N 60 հրամանի հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Տ. Ղարիբյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 (տասնհինգ) օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ

գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 (տասնհինգ) օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը

պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 324,200 (երեք հարյուր քսանչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2019թ. դեկտեմբերի 20-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[1]

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

---

[1] *Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը*

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից՝ անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.10 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմ» ՊՀ	«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5	ք. Երևան, Վարդանանց 110
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011430163	Հ/Հ 163007031509
հվհհ 01539597	հվհհ 01548908
էլ. փոստ gnumner@cptvrc.am	էլ. փոստ SSmartline@mail.ru
Աշխատակազմի ղեկավար՝ Շ. Վարդանյան	Տնօրեն՝ Տ. Ղարիբյան

Հավելված 1
«04» «մարտ» 2019թ. կնքված
«ՀՀՀՌ-ՄԱԱՊՁԲ-02/19» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիր	Չափման միավոր
1	Թուղթ, A4 ֆորմատի	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, (210X297մմ.)	կգ
2	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար,արագակարներին ամրացնելու հնարավորություն	հատ
3	Թղթապանակ, արագակար, թղթյա	Արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210x297մմ) ձևաչափի թերթերի համար	հատ
4	Թղթապանակ, կոշտ կազմով	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297մմ) ձևաչափի թղթերի համար	հատ
5	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով, դեղին գույնի, 76x76մմ 100էջ	հատ
6	Էջաբաժանիչ	Էջաբաժանիչ՝ կպչուն, 5գույն 100 էջ	հատ
7	Սեղմակ, փոքր	Մետաղական, լայնությունը 15 մմ	հատ
8	Սեղմակ, միջին	Մետաղական, լայնությունը 19 մմ	հատ
9	Սեղմակ, մեծ	Մետաղական, լայնությունը 25 մմ	հատ
10	Ամրակ փոքր	Փոքր , գրասենյակային ամրակներ՝ մետաղական կամ պոլիմերային պատվածքով, (25-33 մմ) երկարությամբ: Թղթի դարսը՝ լիարժեք ամրությամբ, միասնական պահելու կարողությամբ	տուփ
11	Գրիչ գնդիկավոր	Գնդիկավոր գրիչներ տարբեր գույների (կապույտ,սև, կարմիր)	հատ
12	Գծանշիչ	Մարկեր տեքստային տարբեր գույնի, շեղ ծայրով՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար	հատ
13	Մատիտներ	Հասարակ, սև մատիտ՝ համապատասխան կարծրությամբ (HB 2)	հատ
14	Սրիչներ	Սրիչ գրաֆիտե միջուկով մատիտի համար	հատ
15	Ռետին հասարակ	Ռետին՝ փոքր, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար	հատ
16	Ուղղիչ գրիչներ	Ուղղիչ գրիչ՝ նախատեսված ուղղումներ կատարելու համար, 8մլ	հատ
17	Ուղղիչ երիզներ կամ ժապավեններ	Ուղղիչ ժապավեն 4,2մմ x 5մմ կամ համարժեքը՝ նախատեսված ուղղումներ կատարելու համար	հատ
18	Ծրար, մեծ, A4 ձևաչափի	Ծրար A4 ձևաչափի՝ կպչուն երիզով, սպիտակ գույնի	հատ
19	Նամակի ծրար, A5 ձևաչափի	Ծրար A5 ձևաչափի՝ կպչուն երիզով, սպիտակ գույնի	հատ

ԳՆՈՐԴ

«Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմ» ՊՀ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430163
հվհհ 01539597
Էլ. փոստ gnumner@cptvcc.am
Աշխատակազմի ղեկավար Շ. Վարդանյան

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007031509
հվհհ 01548908
Էլ. փոստ SSmartline@mail.ru
Տնօրեն՝ Տ. Ղազարյան

Հավելված 2
«04» «մարտ» 2019թ. կնքված
«ՀՀՀՌ-ՄԱԱՊՁԲ-02/19» ծածկագրով գնման պայմանագրի

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՑՈՒՅՑ

Հիմնարկի անվանումը՝ **Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ**

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախարարություն
08	03	01	01	105033

Ծրագրի անվանումը՝ **Հանրային հեռուստառադիոընկերության կառավարում. համակարգում և մոնիտորինգ**

ՀՀ դրամ

ՀՀ	Անվանումը	Չափի միավոր	Միավորի գինը (դրամ)	Գնման ենթակա ապրանքներ (աշխատանքներ, ծառայություններ)									
				I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ		Ընդամենը	
				Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար
1	Թուղթ, A4 ֆորմատի	կգ	800	15	12,000.0	30	24,000.0	60	48,000.0	70	56,000.0	175	140,000.0
2	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	հատ	10	300	3,000.0	500	5,000.0	200	2,000.0	0	-	1,000	10,000.0
3	Թղթապանակ, արագակար, թղթյա	հատ	80	10	800.0	30	2,400.0	30	2,400.0	0	-	70	5,600.0
4	Թղթապանակ, կոշտ կազմով	հատ	800	10	8,000.0	20	16,000.0	10	8,000.0	20	16,000.0	60	48,000.0
5	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	հատ	200	0	-	0	-	10	2,000.0	40	8,000.0	50	10,000.0
6	Էջաբաժանիչ	հատ	300	10	3,000.0	20	6,000.0	10	3,000.0	20	6,000.0	60	18,000.0
7	Սեղմակ, փոքր	հատ	25	0	-	0	-	74	1,850.0	80	2,000.0	154	3,850.0
8	Սեղմակ, միջին	հատ	30	0	-	100	3,000.0	50	1,500.0	50	1,500.0	200	6,000.0
9	Սեղմակ, մեծ	հատ	40	0	-	20	800.0	70	2,800.0	130	5,200.0	220	8,800.0
10	Ամրակ փոքր	տուփ	180	0	-	20	3,600.0	20	3,600.0	0	-	40	7,200.0
11	Գրիչ գնդիկավոր	հատ	100	20	2,000.0	20	2,000.0	30	3,000.0	50	5,000.0	120	12,000.0
12	Գծանշիչ	հատ	250	0	-	0	-	20	5,000.0	0	-	20	5,000.0
13	Մատիտներ	հատ	100	0	-	0	-	40	4,000.0	0	-	40	4,000.0
14	Սրիչներ	հատ	150	0	-	0	-	20	3,000.0	0	-	20	3,000.0
15	Ռետին հասարակ	հատ	100	0	-	0	-	20	2,000.0	0	-	20	2,000.0
16	Ուղղիչ գրիչներ	հատ	250	0	-	0	-	15	3,750.0	0	-	15	3,750.0
17	Ուղղիչ երիզներ կամ ժապավեններ	հատ	400	0	-	0	-	10	4,000.0	0	-	10	4,000.0
18	Ծրար, մեծ, A4 ձևաչափի	հատ	50	50	2,500.0	200	10,000.0	200	10,000.0	50	2,500.0	500	25,000.0

Հ/Հ	Գնման ենթակա ապրանքներ (աշխատանքներ, ծառայություններ)												
	Անվանումը	Չափի միավոր	Միավորի գինը (դրամ)	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ		Ընդամենը	
				Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար
19	Նամակի ծրար, A5 ձևաչափի	հատ	40	50	2,000.0	50	2,000.0	50	2,000.0	50	2,000.0	200	8,000.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**33,300.0**		**74,800.0**		**111,900.0**		**104,200.0**		**324,200.0**

ԳՆՈՐԴ

«Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմ»
ՊՀ
ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011430163
ԲՎՀՀ 01539597
Էլ. փոստ gnumner@cptvrc.am
Աշխատակազմի ղեկավար՝ Շ. Վարդանյան

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908
Էլ. փոստ SSmartline@mail.ru
Տնօրեն՝ Տ. Զարիբյան

Հավելված
«04» «մարտ» 2019թ. կնքվ
«ՀՀՀՌ-ՄԱԱՊՁԲ-02/19» ծածկագրով գնման պայմանագ

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՑՈՒՅՑ

Հիմնարկի անվանումը՝ **Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ**

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր	Նախարարություն
08	03	01	01	105033

Ծրագրի անվանումը՝ **Հանրային հեռուստառադիոընկերության կառավարում. համակարգում և մոնիտորինգ**

հազ. դրա

ՀՀ	Անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին*												Ընդամե
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	Թուղթ, A4 ֆորմատի			12.0	12.0	36.0	36.0	36.0	84.0	84.0	84.0	140.0	140.0	140.0
2	Թղթապանակ, պոլիմերային			3.0	3.0	8.0	8.0	8.0	10.0	10.0	10.0	10.0	10.0	10.0
3	Թղթապանակ, արագակար, թղթյա			0.8	0.8	3.2	3.2	3.2	5.6	5.6	5.6	5.6	5.6	5.6
4	Թղթապանակ, կոշտ կազմով			8.0	8.0	24.0	24.0	24.0	32.0	32.0	32.0	48.0	48.0	48.0
5	Թուղթ նշումների համար,			0.0	0.0	0.0	0.0	0.0	2.0	2.0	2.0	10.0	10.0	10.0
6	Էջաբաժանիչ			3.0	3.0	9.0	9.0	9.0	12.0	12.0	12.0	18.0	18.0	18.0
7	Սեղմակ, փոքր			0.0	0.0	0.0	0.0	0.0	1.9	1.9	1.9	3.9	3.9	3.9
8	Սեղմակ, միջին			0.0	0.0	3.0	3.0	3.0	4.5	4.5	4.5	6.0	6.0	6.0
9	Սեղմակ, մեծ			0.0	0.0	0.8	0.8	0.8	3.6	3.6	3.6	8.8	8.8	8.8
10	Ամրակ փոքր			0.0	0.0	3.6	3.6	3.6	7.2	7.2	7.2	7.2	7.2	7.2
11	Գրիչ գնդիկավոր			2.0	2.0	4.0	4.0	4.0	7.0	7.0	7.0	12.0	12.0	12.0
12	Գծանշիչ			0.0	0.0	0.0	0.0	0.0	5.0	5.0	5.0	5.0	5.0	5.0
13	Մատիտներ			0.0	0.0	0.0	0.0	0.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0
14	Սրիչներ			0.0	0.0	0.0	0.0	0.0	3.0	3.0	3.0	3.0	3.0	3.0
15	Ռետին հասարակ			0.0	0.0	0.0	0.0	0.0	2.0	2.0	2.0	2.0	2.0	2.0
16	Ուղղիչ գրիչներ			0.0	0.0	0.0	0.0	0.0	3.8	3.8	3.8	3.8	3.8	3.8
17	Ուղղիչ երիզներ կամ ժապավեններ			0.0	0.0	0.0	0.0	0.0	4.0	4.0	4.0	4.0	4.0	4.0
18	Ծրար, մեծ, A4 ձևաչափի			2.5	2.5	12.5	12.5	12.5	22.5	22.5	22.5	25.0	25.0	25.0

Հ/Հ	Անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին*												
		I եռամսյակ			II եռամսյակ			III եռամսյակ			IV եռամսյակ			Ընդամե
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
19	Նամակի ծրար, A5 ձևաչափի			2.0	2.0	4.0	4.0	4.0	6.0	6.0	6.0	8.0	8.0	8.0
	ԸՆԴԱՄԵՆԸ			**33.30**	**33.30**	**108.10**	**108.10**	**108.10**	**220.00**	**220.00**	**220.00**	**324.20**	**324.20**	**324.**

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

«Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմ» ՊՀ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011430163

հվհհ 01539597

Էլ. փոստ gnumner@cptvrc.am

Աշխատակազմի ղեկավար՝ Շ. Վարդանյան

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ

ք. Երևան, Վարդանանց 110

«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Հ/Հ 163007031509

հվհհ 01548908

Էլ. փոստ SSmartline@mail.ru

Տնօրեն՝ Տ. Ղարիբյան

Հավելված 4
«04» մարտի 2019թ. կնքված
«ՀՀՀՌ-ՄԱԱՊՁԲ-02/19» ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____
գտնվելու վայրը _____
Հ/Հ _____
_____
ՀՎՀՀ _____

Պատվիրատու

«Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմ» ՊՀ
գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 5
Հ/Հ 900011430163
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 01539597

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«04» մարտի 2019թ. կնքված
«ՀՀՀՌ-ՄԱԱՊՁԲ-02/19» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն